ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Բյուջեում նախատեսվող փոփոխությունների

Հիմք ընդունելով Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ/իրավաբան/ Սուսաննա Սահակյանի 2024 թվականի նոյեմբերի 19-ի զեկուցագիրը և համայնքի ղեկավարի առաջարկը ավագանու որոշման նախագծով առաջարկվում է ֆոնդային բյուջեի 04.5.1 ծրագիր 5113 հոդվածից՝

1. 24784827 ՀՀ դրամ տեղափոխել 10.7.1 ծրագիր 5111 հոդված՝ Սիսիան քաղաքի Շիրվանզադե 6 հասցեում գտնվող հանրակացարանային շենքը աճուրդով ձեռքբերելու համար:

Հիմք ընդունելով Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ/իրավաբան/ Սուսաննա Սահակյանի 2024 թվականի նոյեմբերի 19-ի զեկուցագիրը և համայնքի ղեկավարի առաջարկը ավագանու որոշման նախագծով առաջարկվում վարչական բյուջեի 11.1.2 ծրագիր 4891 հոդվածից՝

215173 ՀՀ դրամ տեղափոխել 10.7.1 ծրագիր 4823 հոդված՝ Սիսիան քաղաքի Շիրվանզադե 6 հասցեում գտնվող հանրակացարանային շենքի աճուրդի մասնակցության վճարի համար:

Ֆինանսատնտեսական բաժնի պետ **Դ. Այվազյան**

20.11.2024թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Սույն նախագծի ընդունումից հետո համայնքի բյուջեի եկամուտային և ծախսային մասերում փոփոխություններ չի նախատեսվում:

Ֆինանսատնտեսական բաժնի պետ **Դ. Այվազյան**

20.11.2024թ.

Դ. Ոսկանյանին
Ընդունված է
19.11.2024թ.

Սիսիան համայնքի ղեկավար

Պարոն՝ Հ. Առաքելյանին

Սիսիանի համայնքապետարանի
աշխատակազմի առաջատար մասնագետ՝

Սուսաննա Սահակյանից

Զեկուցագիր

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Հիմք ընդունելով ՀՀ Սնանկության դատարանի 2022 թվականի հունիսի 06-ի թիվ ՍՆԴ/0675/04/20 որոշումը և ղեկավարվելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի 4-րդ կետով և «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքով՝ «Դաստակերտի բուժտեխնիկայի գործարան» ԲԲԸ-ի պարտավորությունների կատարումն ապահովելու համար սնանկության գործով կառավարչի՝ Ա. Ադամյանի կողմից սույն թվականի նոյեմբերի 27-ին ժամը 15:00-ին հայտարարվել է աճուրդ:

Լոտ 3-ով աճուրդի է դրված «Դաստակերտի բուժտեխնիկայի գործարան» ԲԲԸ-ի պարտավորությունների կատարումն ապահովելու համար Պարտապանին և/կամ երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Սյունիքի մարզ, ք. Սիսիան , Շիրվանզադե փողոց 6 հասցեում գտնվող հանրակացարանը: Մեկնարկային գինը՝ 21.517.222 /քսանմեկ միլիոն հինգ հարյուր տասնյոթ հազար երկու հարյուր քսաներկու/ ՀՀ դրամ է:

Հիմք ընդունելով Սիսիան համայնքի վերոնշյալ հանրակացարանի բնակիչների կարիքները, ինչպես նաև Ձեր հանձնարարականը՝ աճուրդին Սիսիան համայնքի մասնակցության համար անհրաժեշտ է նախատեսել 25.000.000 /քսանհինգ միլիոն/ ՀՀ դրամ:

Աճուրդի մասնակցության վճարը կազմում է 21.517.222 /քսանմեկ միլիոն հինգ հարյուր տասնյոթ հազար երկու հարյուր քսաներկու/ ՀՀ դրամի 1%-ը:

Աճուրդի նախավճարը կազմում է 21.517.222 /քսանմեկ միլիոն հինգ հարյուր տասնյոթ հազար երկու հարյուր քսաներկու/ ՀՀ դրամի 5 %-ը:

Խնդրում եմ Ձեր հանձնարարականը ֆինանսական բաժնին՝ համապատասխան վճարումներ իրականացնելու նպատակով:

Զեկուցող/_____/Ս. Սահակյան

19.11.2024թ.

ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի
համայնքապետարանի աշխատակազմի
տնտեսագիտության, աճեցնակազմի իրատարման,
հանրակրթական տեխնոլոգիաների բաժին
Մուտքագրված թիվ 314
19 „ 11 „ 2024